ցիչն առաջին անգամ եկաւ այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը ցնծութեամբ տօնում էր իր անկախութեան երկրորդ տարեդարձը, և այժմ, երբ լուծւում է հայկական հարցը: Հայ ժողովուրդը համաշխարհային այս պատերազմի ընթացքում ու դեռ նրանից շատ առաջ տուել է բազում զոհեր յանուն արդարութեան և ազատութեան. այսօր նա, իբր փոքր դաշնակից, հանդէպ ֆրանսական ներկայացուցչի իրաւունք ունի պահանջելու, որ իր դատը արդար լուծում գտնի: Հայկական հարցը դաշնակից պետութեանց համար պատւի ու խղճի հարց է, և հայ ժողովուրդը երբեք չէ թերահաւատել, որ դաշնակիցները արդարութեամբ և համաձայն խղճի թելադրանքի կը լուծեն այս տառապեալ ժողովրդի դատը: Ողջո՛յն դեղեցիկ, ազատասէր Ֆրանսային, յանձին իր ներկայացուցիչ Դը Մարտէլի:

Խորհրդարանը բուռն ծափահարութեամբ ողջունում է ֆրանսական ներկայացուցչին, որը շնորհակալութիւն յայտնելով՝ կարդում է հետևեալ ճառը.

Պարոնայք, քանի որ ինձ վիճակւած է ներկայ լինել ձեր խորհրդարանի այս նիստին, թոյլ տուէք եղբայրական ողջոյնը հաղորդել ձեզ ֆրանսական ժողովրդի, որ միշտ ուշադիր է և շահագրգռւած այն ճիգերի հանդէպ, որ գործ են դնում ազգերը քաղաքակրթութեան և յառաջադիմութեան յաճախ ծանր ու դժուարին ճանապարհով վեր մագլցելու գործում:

Պատերազմն եղաւ երկար ու դժուարին: Մեր թշնամին, երկար ժամանակով նախապատրաստւած, հակառակ նրան հասած անընդհատ հարւածներին, չէր ուզում զիջել: Համաշխարհային տիրապետութիւն ստեղծելու խելագար վազքի մէջ՝ նա չտատանուեց կոչ անել ամենավատ բնազդներին բոլոր նրանց, որոնց համար մեր քաղաքակրթութիւնը խորտակելը հերթական մի խորհրդանշան դարձաւ:

Ուրանալով Պոլսում ի նպաստ փոքրամասնութիւնների միջամտութեան հնաւանդ քաղաքականութիւնը՝ գերմանական իմպերիալիզմը չտատանուեց մեղսակից դառնալ Իսլամին, որի կամքին էր թողնում, առանց պայմանի, այնքան դաժանօրէն տանջւած ժողովուրդներին:

Հայ ժողովուրդը 250,000 զինւոր ռուսական ճակատն ուղարկելուց յետոյ, չտատանուեց ամբողջովին ոտքի կանգնել: Մենք ունէինք արդէն բազմաթիւ կամաւորներ մեր օտար լեգիոնի մէջ. մենք տեսանք, թէ ինչպէս հայկական մի լեգիոն քաջութեամբ կռւում էր մեր զինւորների հետ կողք կողքի:

Գերմանական պարտութիւնից և խաղաղութեան դաշն կնքելուց յետոյ էլ համաշխարհային պատերազմը դեռ իսպառ չէ վերջացած. Թիւրքը չէ ուզում ընդունել իր անյաջողութիւնները և փորձում է դեռ զուր ճիգերով փրկւել իր անխուսափելի ճակատագրից:

Ձեր զինւորները զէնքը ձեռքին ստիպւած էին միշտ պաշտպանել Հայաստանի հողը և պայքարել նրա անկախութեան համար: Բայց վախճանը մօտ է, և Թիւրքիան անխուսափելի ճնշման տակ պիտի խոնարհի յաղթող դաշնակիցների որոշակի արտայայտւած կամքի առաջ:

Շուտով մի արշալոյս կը ծագի Հայաստանի համար, որը, վերջապէս, պիտի կարողանայ ամրանալ խաղաղ կեանքով և աշխատել իր գիւղերը վերաշինելու ի մխիթարութիւն կոտորածներով փչացած և իրենց օճախներից վտարւած ազգաբնակութեան:

Մեծ գործ է կատարւած, պարոններ, և մինչև նպատակն իսպառ իրագործելը բարի ցանկութիւնները շատ չպիտի համարել: Իրականութիւնը արհամարհելով չէ, այլ ընդհակառակը նրա ճակատին շեշտակի նայելով